

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»  
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝  
2014 թվականի մարտի 26-ի՝ ժամը 14:00-ի նիստի

**1. 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և մեր խնդիրները:**

Զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր  
**Մ.Ն.Հարությունյան:**

**2. Ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյանի հաղորդումը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման մասին:**

**3. Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին:**

Զեկուցող՝ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ  
**Վ.Գ.Գևորգյան:**

**4. Որակի ապահովման աշխատանքների դրվածքը ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում:**

Զեկուցող՝ որակի ապահովման բաժնի պետ **Ն.Ա.Գևորգյան:**

**5. «Պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն» և «Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն» մասնագիտացումների բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր  
**Պ.Ա.Քալանթարյան:**

| Մասնագիտացումներ   | Ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը |  |
|--|---|--|
|  | Պարտադիր  | Ավարտական աշխատանք չգրող ուսանողների համար |
| Պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն    | Պարենային ապրանքների ապրանքագիտություն                | Պարենային ապրանքների փորձաքննություն       |
| Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն | Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն             | Ոչ պարենային ապրանքների փորձաքննություն    |

6. Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գրիգոր Արշամի Նազարյանին՝** միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Քրիստինե Ալֆրեդի Եղիազարյանի «Օդային տրանսպորտի միջազգայնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով Ը.00.06՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին:  
Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

7. Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Ատոմ Շավարշի Մարգարյանին՝** տնտեսագիտության տեսության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Տաթև Թադևոսի Խաչատուրյանի «Նորաստեղծությունների ինստիտուցիոնալ համակարգի զարգացման հիմնախնդիրները. տեսության և մեթոդաբանության հարցեր»** թեմայով Ը.00.01՝ «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին:  
Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

8. Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Ատոմ Արտավազդի Վարդանյանին՝** տնտեսագիտության տեսության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Սամվել Յուրիկի Մարգարյանի «Տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունները»** թեմայով Ը.00.01՝ «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին:  
Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

9. Կոմերցիայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գագիկ Սիրեկանի Զատինյանին՝** կոմերցիայի ամբիոնի հայցորդ **Արմեն Արսենի Համբարձումյանի «Առևտրական կազմակերպության կառավարման կազմակերպատնտեսական հիմնախնդիրները»** թեմայով Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու մասին:  
Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

10. **Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**

1) **Նորիկ Լիանիտի Զաքոյան՝** ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի դասախոս:  
Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

11. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը» հաստատելու և գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 12-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական կազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր  
Մ.Ն.Հարությունյան:

12. Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը քննարկելու և հաստատելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր  
Գ.Ի.Վարդանյան:

13. Գիտական կազմակերպության, առանձնացված գիտական կամ գիտակրթական ստորաբաժանման (ընդհանուր օգտագործման կենտրոնի, լաբորատորիայի) գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի նախագծերի հայտերը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր  
Գ.Ի.Վարդանյան:

14. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի նախագծի հայտը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր  
Գ.Ի.Վարդանյան:

15. Ընթացիկ հարցեր:

1) Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր  
Գ.Ի.Վարդանյան:

2) Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Դիանա Ռոբերտի Գալոյանի «Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները»** մենագրության (225 էջ ծավալով) հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր  
Գ.Ի.Վարդանյան:

Գիտական քարտուղար՝  
26.03.2014 թ.

Ն. Հ. Դարբինյան